ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-3/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 23.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Բ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 25.12.2019թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-3/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Վաճառողն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդի հանձնարարությամբ մատակարարել սույն Համաձայնագրով նախատեսված Տեղեկատվական վահանակներ (այսուհետև՝ Ապրանք) համաձայն № 1 Հավելվածով սահմանված Ապրանքների գնման ժամանակացույցի, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ապրանքների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 884 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար): Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդը մատակարարած ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 3.1 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքների հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Կոմիտասի պ. 60/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 2204933333185000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00145961
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 1
***N ԳՀԱՊՁԲ-20-3/3-1** պայմանագրին կից*
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթական ապրանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր գումարը	Ապրանքների մատակարարումը 2020թ. 3-րդ եռամսյակ
1	Տեղեկատվական վահանակներ (ՀՀ ազգային հերոսների տպագրված պաստառներ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	20	45 000	900 000	20
2	Տեղեկատվական վահանակներ (Արցախի ազգային հերոսների տպագրված պաստառներ՝ մետաղյա հենքով և ամրակներով)	հատ	24	41 000	984 000	24

Հավելված N 2
***N ԳՀԱՊՁԲ-20-3/3-1** պայմանագրին կից*
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

դրամ

Հ/Հ	Գնման ենթական ապրանքների անվանումը	CPV կոդ	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Տեղեկատվական վահանակներ (ՀՀ ազգային հերոսների տպագրված պաստառներ մետաղյա հենքով և ամրակներով)	35261100/501	900 000	900 000	900 000	900 000	900 000	900 000
2	Տեղեկատվական վահանակներ (Արցախի ազգային հերոսների տպագրված պաստառներ՝ մետաղյա հենքով և ամրակներով)	35261100/502	984 000	984 000	984 000	984 000	984 000	984 000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԴԵԿՈՐՈՎՅԱՆ